ցել էին կռոին, սաստիկ ծեծ կերան: Նրանք ծեծ կերան նրա համար միայն, որ թոյլ չտոեցին մահմեդական երեխաներին իրանց ծեծել... Միթէ՞ ինքը, դպրոցը, չէր պատրաստում մեզ ծեծոելու համար... միթէ՞ նա չէր մտցնում մեր մէջ ստրկութիւնը...

Թէեւ խիստ թանկ նստեց մեր կատարած անկարգութիւնը, բայց նրա հետեւանքը բաւական օգտաւէտ եղաւ մեզ համար: Այնուհետեւ մահմեդական երեխաները սկսեցին վախենալ մեզանից եւ աւելի յարգանքով վարոել: Եւ շատ սակաւ էր պատահում, որ նրանց փողոցներից անց կենալու ժամանակ մեր ընկերները ծեծոէին, մանաւանդ երբ խումբերով էին անց կենում եւ պատրաստ էին ընդդիմադրել:

Այդ անցքից յետոյ Կարօն նշանակութիւն ստացաւ իր ընկերների մէջ, եւ համարեա բոլորին պաշտելի դարձաւ: Ամէն մէկը խոնարհւում էր նրա հեղինակութեան առջեւ:

— Տեսա՞ք, — ասաց մեզ Կարօն մի քանի օրից յետոյ. — «շանը մինչեւ չծեծես, չի բարեկամանայ»...

Այդ բոլորը «անկարգութիւնների խմորը» (տէր Թոդիկի լեզոով) Կարօն էր: Վարժապետը վաղուց արտաքսած կը լինէր այդ խռովարարին իր հիմնարկութիւնից, եթէ մի քանի պատճառներ արգել չլինէին: Որպէս վերեւում ասեցի, Կարօյի տատը հմուտ էր ժողովրդական բժշկութեան մէջ. իր արհեստով նա վայելում էր քաղաքի ոչ միայն հայ հասարակութեան յարգանքը, այլեւ մահմեդականների մէջ մեծ պատիւ ունէր: Նրա պատոի համար Կարօյին ներում էին: Բացի դրանից, Զումրուդը իր բժշկական հնարներով ոչ սակաւ օգնում էր միշտ հիւանդ տէրտէրակնոջը եւ ամենեւին վարձատրութիւն չէր պահանջում:

Մի դէպքի պատճառով ինքը Կարօն հեռացաւ տէր Թոդիկի դպրոցից:

Մեր դպրոցը ունէր մի վերակացու, որին կոչում էին Խալֆա-Թաթոս: Այդ Գոլիաթը կը լինէր երեսուն տարեկան, այսինքն՝ հասակովը տասն եւ հինգ տարի մեծ Կարօյից: Նա վախենում էր կարիճից, վախենում էր ամէն տեսակ պողոճներից եւ մինչեւ անգամ ճանճերից: Միակ արարածները, որոնցից չէր վախենում Խալֆա-Թաթոսը, էին աշակերտները: Երեխայութիւնից այդ տիտանը ձրի ծառայում էր, սպասաւորութիւն էր անում տէր Թոդիկի մօտ, որպէսզի նրա շնորքից, նրա գիտութիւնից մի մասն ստանայ, որ ինքն էլ կարողանայ քահանայական փիլոնը գցել ուսին եւ վարժապետական աստիճանին արժանանալ: Բայց խղճալին իր կեանքում մի անգամ միայն կարողացել էր եկեղեցում «լոյս զոարթ» երգել եւ այն օրից միշտ պար-